

Արք եւ կանայք ծով կ'երթան լուացուելու:

Երկու օրուան մէջ անգղիերէն սորվեցնող քերականութիւն մը կհրատարակուի:

Կանանց *թիւն/իւն*ներուն վրայ մէյմէկ ծաղիկ կդրուի:

12 - 19 Յուլիս

Պարզ եւ սօթ:

Գինովներուն վիճակը ցաւալի է:

Մեծ մարդ մը կպզտիկնայ եւ պզտիկ մարդ մը կմեծնայ:

20 - 31 Յուլիս

Աշխարհիս խաղաղութիւնը պահելու համար տէրութիւն մը կաշխատի: Յորենի գինը կ'իյնայ. հացի նկանակներու մէջէն մէյմէկ կտոր ածուխ կելլէ:

Ամսոյս մէջ ալ ծնիլն աղէկ բան մը չէ. մանչերն կնաթող կ'ըլլան, աղջիկներն թշուառ. ալ խորհեցէք անգամ մը:

ՕԳՈՍՏՈՍ

1 - 9 Օգոստոս

Ջերմութիւնն քիչ մը նուազեցաւ:

Բոլոր աշխարհի ինքնզինքը կերուխումի տուած է:

Առեւտուրները անզգալի կերպով կբացուին:

Կիսնդրեմ սա սեխերը ծով նետեցէք: Կուրծքի տկարութիւն ունեցողները ծով չը մտնեն:

10 - 17 Օգոստոս

Ձովութիւնը կսկսի, ինչպէս նաեւ հարբուխը:

Ծովէն ելնելէ վերջը նայեցէք, որ գլուխնիդ չորնայ:

Առաւօտները անօթի փորանց խաղող կերէք՝ որքան որ կներէ ձեր քսակը:

Երաժիշտներուն ձայնը աշխարհ բռներ է:

Խեղճ ձայնաւորներուն ձայնը չելներ: Եկեղեցի գացող չկայ: